

ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Ա. Ն. ՀԱՆՆՅԱՆ

Տիգրանակերտի բարբառում գերանունները խմբավորվում են հետևյալ տեսակներով. անձնական, ցուցական, հարցական-հարաբերական, որոշյալ, անորոշ, փոխադարձ, ժխտական:

Ա. Անձնական գերանուններն են՝

1 գեմք—յէս, մինք

2 գեմք—թուն, թուք

3 գեմք—ինք, իրանք

Սրանց ներկայացրած առնչակցություններն են.

1. Միջին և նոր հայերենին վերաբերող՝

ա) յէ հնչումը յէս գերանվան մեջ.

բ) ն-ի հավելումը մինք գերանվան մեջ:

2. Արևմտյան (մասամբ արևելյան) խմբի բարբառներին և զրական լեզվին՝ առնչվող՝

ա) ն-ի հավելումը քուն գերանվան մեջ.

բ) զ>ք հնչումը երկրորդ գեմքի գերանունների սկզբում:

3. Մուշ—Տիգրանակերտ խմբի բարբառներին հատուկ՝

ա) բառավերջի ն-ի կորուստը և ը-ով չփոխարինվելը ինք (<ինքն) գերանվան մեջ.

բ) իրանք (<իրեանք) գերանվան եա>ա հնչյունափոխությունը, որ օրինալափ չէ այս բարբառի համար, սպասելի էր ի՞ առաջացած է-ից (հմտ. ցորեան>ցորէն>ցորին), ուրեմն բարբառների փոխներթափանցման արդյունք է:

4. Հիմնականում Կիլիկյան և Անտիոքի բարբառախմբերին վերաբերող՝ ե>ի հնչյունափոխությունը մեք>մինք գերանվան մեջ:

Բ. Զուցական գերանունները բարբառում խմբավորվում են գերանվանական ս և ն արմատների շուրջը: Քանի որ բարբառը շունի ու արմատով գերանուններ, ուստի ն- արմատով գերանունները արտահայտում են նաև ընդհանուր հայերենի ու արմատով գերանունների իմաստը:

էս—(այս)

ըսի||ըսսիդի (սա)

հօս (այստեղ)

սանց (այսպես, այսպիսի)

էսթէն (այս կողմ)

էսդիդ (այստեղ)

էն (այդ, այն)

ընի||ընիդի (դա, նա)

հօն (այնտեղ)

նանց (այդպես, այնպես, այդպիսի, սի, այնպիսի)

էնթէն (այդ կողմ, այն կողմ)

էնդիդ (այդտեղ, այնտեղ)

էսղ՝ըղըր (այսքան)
 էսչէշիդ (այս կերպ)
 հօսդիդ (այստեղ)
 հօսդըղիդ — — — —

էնղ՝ըղըր (այդքան, այնքան)
 էնչէշիդ (այդ կերպ, այն կերպ)
 հօնդիդ (այդտեղ, այնտեղ)
 հօնդըղիդ — — « — —

Այս շարքերից դուրս է մնում մէգէլ||մէգալ (մյուս) դերանունը: Նշված դերանուններից՝

ա) էս, էս-ը համապատասխանում են հին հայերենի այս, այն դերանուններին:

բ) րսի, ռնի դերանունները առնչվում են բարբառներում լայն տարածում ունեցող ասի, էսի, իսի ձևերին:

Պրոֆ. Աճառյանը սրանց ծագումը կապում է կ-ով հանգող դերանուններին՝ ասիկ, էսիկ, իսիկ, րսիկ, որոնցից կ-ի անկմամբ առաջացել են ձայնավորահանգ ձևերը:

գ) րսի, ընի դերանուններին զուգահեռ կիրառվող րսսիգի, ընիգի դերանունները նույնպես կապվում են արևմտյան խմբի բարբառներում տարածված իկ մասնիկով ասիկ, ասիկա տիպի ցուցականներին: Պրոֆ. Աճառյանը իրավամբ այս կ, իկ մասնիկը կապում է գրաբարի այս, այդ, այն ցուցականների երկար (մասնիկավոր) հոլովաձևերի հետ՝ այսորիկ, այսմիկ և այլն, սակայն բարբառների կ-ով բառաձևերը համարում է ետգրաբարյան գոյացումներ, որոնց առաջացումը պատճառաբանվում է դերանունների որոշչային և գերափոխական կիրառությունների տարբերակման միտումով (էս, աս՝ որոշչային, էսիգ, ասիգ՝ դերանվանական)¹:

Դեռևս միջին հայերենում այս, այդ, այն դերանունները հոլովվում էին պրաբարի մասնիկավոր դերանունների նման, սակայն առանց մասնիկի՝ այս-այսոր, այտ-այտոր, այն-այնոր: Արևմտյան խմբի բարբառները և գրական լեզուն տրական հոլովի գրեթե նույն կազմությունը ի հայտ են բերում ասի, էսի, իսի, րսի, ասիկ, իսիկ և նման մասնիկավոր կամ մասնիկը կորցրած դերանունների հոլովման հարացույցում, իսկ էս, էն, աս, ան դերանունների համար շունեն թեք ձևեր: Այսպիսով՝ րսի||րսսիգի-ըսուր (տրական), ասի||ասիկա-ասոր տիպի հոլովումը ներկայանում է բարբառներում իբրև գրաբարի այս, այդ, այն ցուցականների մասնիկավոր հոլովաձևերի ավանդ: Պրոֆ. Աճառյանը ասոր, ըսուր տրական հոլովաձևերը բխեցնելով գրաբարի այսը հոլովաձևից, ո, ու ձայնավորը համարում է ուշ շրջանի հավելում՝ բարենշունություն նպատակով²: Սակայն այս-ի կողքին առկա այսորիկ ձևը տարակույս չի թողնում, որ բարբառային ասոր, իսոր, ըսուր հոլովաձևերը իրենց որ (ուր) հոլովիչով առնչվում են իրեն:

Ի դեպ, պրոֆ. Ղարիբյանը Արամոյի բարբառի դերանունները քննելիս՝ րսսոր, ինժ ուր (ասոր, անոր) հոլովաձևերը բխեցնում է այսորիկ, այնորիկ ձևերից³:

Մ. Մուրադյանը նույնպես իր «Շատախի բարբառը» աշխատության մեջ վանի բարբառի իսոր, իտոր, ինոր հոլովաձևերը կապում է այսորիկ, այդո-

1 Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 2, 1954, էջ 195:

2 Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. 2, 1951, էջ 246:

3 Ա. Ղարիբյան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երևան, 1958, էջ 36:

րիկ, այնորիկի հետ, իսկ Շատախի բարբառի ցուցականների հոգնակները՝ անոնք, ատոնք, համապատասխան հոգնակներին՝ այնորիկ, այդորիկ-ի հետ⁴։ Իրոք, այս դերանունների հոգնակի ձևերը՝ բարբառում ըստունք, ընունք, միջին հայերեն՝ այսոք, այտոք, այնոք, առնչվում են զրաբարի մասնիկավոր հոգնակներին հետ (այսք||այսոքիկ, այնք||այնոքիկ), սրանք դարձյալ ներկայանում են մասնիկի անկումով, ք-ից առաջ ն աճականով և այլ բրկբարբառի հնչյունափոխությամբ։ Հոգնակի տրականը նույնպես կապվում է զրաբարի հոգնակի սեռ.—տրական հոլովաձևին—ասոնց, ըստունց—գր. այսոցիկ։ Այսպիսով՝ զրաբարը չունի մասնիկավոր ցուցականների եզակի ուղղականը և հայցականը։ Ժամանակակից բարբառները ունեն մասնիկավոր ուղիղ ձև (եզակի), սակայն թեք հոլովաձևերում չեն պահպանել մասնիկը. բացառություն են կազմում արևմտահայ մի շարք բարբառների բացառական հոլովում պահպանված հետքերը. Հմշ.⁵ էնգի, ինգի, Զեյթ.⁶ էնիգէց, Մրշ.⁶ ըսիգէմ. նաև գործիական՝ ըսիգիւ, Պոլ.⁶ ասկէ, ադգէ, անգէ, Ն. Ն.⁶ ասկից, սագից և այլն⁶։ Մնում է եզրակացնել, որ բարբառները պահպանել են հին հայերենում և գուցե նրանից էլ ավելի առաջ այս, այդ, այն դերանունների հետ զուգահեռ զուգություն ունեցած այսիկ, այդիկ, այնիկ ցուցականները, որոնց եզակի թեք հոլովաձևերը և հոգնակին ամբողջությամբ ավանդված են զրաբարում, սակայն իրենք կանոնական չեն եղել և չեն գործածվել։ Ասիկ, էսիկ, իսիկ, ըսիկ դերանունները վաղուց ի վեր բարբառների հատկապես արևմտյան խմբում գործառնել են իբրև մասնիկավոր ցուցականների ուղիղ ձևեր։ Այսպիսով՝ բարբառները ուղիղ ձևով պահպանելով վաղնջական հայերենի մասնիկավոր ցուցականները և նրանց սեռական հոլովի ու հոլովիչը, հոգնակիում և թեք հոլովաձևերում կորցրել են իկ մասնիկը՝ բառաձևի կարճացման սկզբունքով։ Սակայն բացառական հոլովում պահպանված կ մասնիկը (որոշ բարբառներում) ակնհայտ ապացույցն է այն բանի, որ բարբառների ասի, ըսի, էսի և այլ դերանունների հոլովման հարացույցներում ինչ-որ ժամանակ մասնիկավորում գոյություն է ունեցել։

Թե երբևէնից են ցուցականների պարզ և մասնիկավոր ձևերը բարբառներում ստացել գործառության ոլորտների տարբերակում, դժվար է որոշել։ Տիրանակերտի բարբառում գոնե դրանց կիրառության սահմանազատվածությունը բացատրվում է ցուցականների զրաբարյան սա, դա, նա շարքի բացակայությամբ, որի դերանվանական իմաստը բարբառում արտահայտվում է ըսի||ըսսիգի, ընի||ընիգի դերանուններով, իսկ որոշչային կիրառությունը բաժին է ընկնում էս, էն պարզ ցուցականներին։

Տիրանակերտի բարբառի ըսսիգի, ընիգի դերանունները պրոֆ. Աճառյանը բխեցնում է ասիկ, անիկ ձևերից՝ ա > ր հնչյունափոխությամբ, իսկ վերջահանգ ի ձայնավորը համարում է այն նույն ի հենարանը, որ բարբառում ուղեկցում է ստացական հոգերին (դո՛ւնքի/տո՛ւնքի)⁶։ Սակայն ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ի հենարանը բարբառում գործառում է միայն ստացական հոգերի առկայությամբ, դժվարանում ենք կապ գտնել նրա և դերանվանական ի վերջահանգի միջև, մանավանդ որ ստացականի ի հենարանը չի շեղվում, իսկ դերանվանական ի վերջահանգը շեղտակիր է։ Մեզ

4 Մ. Մուրադյան, Շատախի բարբառը, Երևան, 1962, էջ 16 և 118։

5 Հր. Աճառյան, Լիակատար քերականություն, հատ. 2, էջ 234։

6 Նույն անցում, էջ 199—200։

թվում է, որ այս ի-ի բացատրությունը պետք է որոնել ռսսիգի, րնիգի ցույակականների և անձնական դերանունների տրական, հայցական մասնիկավոր հոլովածների՝ մրգրգի, ֆեղիգի, ինֆրգի, կապի մեջ: Այսպես, նախապես ռսիգ, րնիգ դերանունների համաբանությամբ առաջացել են անձնական դերանունների մրգիգ, ֆրգիգ, ֆեղիգ և այլ հոլովածներ, որոնց կցվել է հոլովական ի վերջավորությունը՝ տալով մրգիգի, ֆեղիգի, ինֆրգի ձևերը, ապա փոխադարձ համաբանությամբ իգ մասնիկից հետո հնչվող ի ձայնավորը յուրացրել են նաև ռսիգ, րնիգ ցուցականները՝ առաջացնելով ռսսիգի, րնիգի նոր ձևերը:

դ) Ասի, րնի ցուցականների հոգնակները՝ ըսսունֆ, րնունֆ, հանգում են գրաբարի ալսոֆիկ, ալսոֆիկ հոգնակներին հետևյալ ուղիով. ըսսունք, րնունք <ասոնք, անոնք (արևմտ գր. լեզու) <ալսոք, ալսոք (միջ. հայ.) <ալսոքիկ, ալսոքիկ (գր.):

ե) Հօս, հօն մակբայական դերանունները գործածական են արևմտյան խմբի բարբառներում և գրական լեզվում: Գրաբարում ավանդված չեն, նախապես երևան են եկել միջին գրական հայերենում: Պրոֆ. Աճառյանի կողմից հօս, հօդ, հօն դերանունները համարվել են տնտուգաբանելի⁸: Սրանցում սովորաբար, ու, ն դերանվանական արմատական հնչյունները անուրանալի փաստ են այս դերանունների բնիկ հայկական ծագման հավաստիության համար: Գրաբարում սրանց բացակայությունը կարելի է բացատրել նրանով, որ գրական լեզվի հիմքում ընկած բարբառախումբը չի ձանաչել այս դերանունները ալսպես, ինչպես հիմա արևելահայ գրական լեզուն և բարբառները բոլորովին չգիտեն ալսպիսի ձևեր:

Անբացատրելի է մնում հօ հնչյունակապակցությունը, որի մասին կարելի է վանազան ենթադրություններ անել: Գուցե և այս հօ-ն կապվում է գրաբարի յո (ուր) դերանվան հե՞տ, մանավանդ որ երկուսն էլ տեղային իմաստ ունեն⁹:

զ) Սանց, նանց դերանունները առնչվում են արևելահայ խմբի բարբառների էսէնց, էտէնց, էնէնց (Արար. Թբ.), ըսէնց||սենց, ըթէնց||թէնց, հընէնց (Հոռի) նույնիմաստ բառաձևերին: Մեր կարծիքով ց հանգող այս դերանունները կապվում են միջին հայերենի հայնց, այնց, հանց, հէնց նույնանիշ ձևերի հետ: Սրանցում այ երկբարբառը մի տեղ ա, մի տեղ է ձայնավորի վերածված լինելով՝ դեռևս միջին հայերենում առաջացրել էր հանց, հէնց գույաձևեր: Եթե հայնց դերանվան նախահունչ հ-ն համարելու լինենք ի նախդիր, ապա այս ձևը այն դերանվան գրաբարյան հոգնակի բացառականն է՝ լայնց, որ քարանալով, ձևոք է բերել այնպես, այնպիսի իմաստներ: Միջին հայերենում այս դերանունը կարող էր գործածվել նաև առանց նախդիրի՝ ալսնց ձևով: Բարբառներում հանց, հէնց դերանվան իմաստի աստիճանական աղոտացման պատճառով կարիք է զգացվել ցուցականների հավելագրման:

⁷ Հնարավոր է նաև ալսպիսի բացատրություն. ռսսիգի, րնիգի ձևերը ենթադրել են տալիս կրկնակ ածանց ունեցող ըսիգիգ, րնիգիգ նախաձևեր, մի երևույթ, որ հանդիպում է բարբառներում. օրինակ, Շամախի՝ յլսիգիգ, Պոլ.՝ սսիկակ, որից և պրոֆ. Աճառյանը բխեցնում է ասիկա ձևը՝ կ-ի անկումով, վերջին գ-ի անկմամբ ստացվել են ռսսիգի, րնիգի ձևերը:

⁸ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն, հատ. 5, 1965, էջ 281:

⁹ Տե՛ս նաև Ա. Ղարիբյան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, էջ 37:

որոնք նպաստել են իմաստի ուժգնացած գրսևորմանը: Այս, այդ, այն (էս, էդ, էն) և հանց, հէնց գերանունների բաղադրմամբ առաջացել են էսանց, էդանց, էնանց, էսէնց, էդէնց, էնէնց և նման ձևեր, որոնցում անց, էնց գերանունը ունի միայն պես, պիսի իմաստը: Այս ձևերը կարող էին կազմված լինել հայնց-ի նախդրավորի և նախդրավոր տարբերակներից՝ հ-ի անկմամբ: Լուռու խոսվածքում րքէնց գերանվան ր շնչեղ խուլը առաջացել է էդֆէնց բառածևի դի (տհ) հնչյունակապակցությունից: Տիրապետության բարբառի սանց, նանց գերանունների համար ենթադրելի են էսանց, էնանց նախածևեր, որոնցից է>ր հնչյունափոխությամբ՝ րսանց, րնանց, ապա ր-ի անկմամբ՝ սանց, նանց:

է) էսքէն, էնքէն գերանունները բաղադրված են էս, էն ցուցականներից և դեն (կողմ) գոյականից: Ն որոշիչ հոգը բարացել է սրանց վրա և նրանից առաջ տեղի է ունեցել հ-ի անկում: Այս ձևերը առնչվում են արևմտահայ դրանան լեզվի և բարբառների ասդին, անդին գերանուններին:

ը) էսդիդ, էնդիդ—կազմված են ցուցականների և դիդ (տեղ) գոյականի բաղադրմամբ: Կազմվում են արևելահայ խմբի բարբառների էստեղ, էնտեղ ձևերին:

թ) էսդ՛րդր, էնդ՛րդր գերանունների կազմության մեջ առկա են ցուցականներ և թուրքերեն *kadın* (չափ) փոխառյալ բառը, որի ձայնավորները թույլ շեշտվածության պատճառով հնչյունափոխված են ր-ի:

ժ) էսէշիդ, էնէշիդ— սրանք նույնպես կազմված են ցուցականներով և թուրքերենից փոխառյալ *çesit* (տեսակ, կերպ) բառով:

ի) Հօսդիդ, հօնդիդ— բաղադրված են հօս, հօն գերանուններից և դիդ (տեղ) բառից:

լ) Հօսդդիդ, հօնդդիդ — կազմված են նախորդ գերանուններից իկ վերջածանցով:

խ) Մէգէլ||մէգալ — բաղադրված են մէգ (մեկ) թվականից և ալ (էլ, ալ) գերանունից:

Գ. Հարցական—հարաբերական գերանուններն են վօվ (ով), վօվիր (ովքեր), ինչ, ինչիր, վօր մի (որ), վօր մէգ (է), յէփ (երբ), յուր (ուր), քանի (քանի, ինչքան), էր (ինչու), ինչդ ըզըր (ինչքան), ինչխըս (ինչպես, ինչպիսի): Սրանց զգալի մասը ավանդված է հին ու միջին հայերենից, մյուսները բարբառային կազմություններ են: Իրենց կազմությամբ ուշագրավ են.

ա) վօվ գերանունը (հին հայ. ո, ով), նախահունչ վ-ն բացատրվում է բարբառում միավանկ բառերի սկզբում ո-ի վօ (վր) հնչմամբ (հմտ. վրսբ < ոսպ, վրրփ < որբ).

բ) յուր գերանունը ուր-ն է, նախահունչ յ-ն առաջացել է յո (ուր) կորած գերանվան համաբանությամբ:

գ) էր գերանունը, որ գրաբարի դի, զինչ գերանվան սեռական հոլովածն է, գեռես միջին հայերենում գործածվում էր իրրև ինքնուրույն բառածև, բարբառներում բավական մեծ տարածում ունի:

դ) ինչխըս գերանվան իւրս (խաւ) բաղադրիչը արաբական ծագում ունի:

Դ. Որոշյալ գերանուններն են՝ րմմրն||րմմուն (ամեն, ամենքը, բոլորը), հաւրհաւ (է) (յուրաքանչյուրը, յուրաքանչյուր որ, ամեն մեկը):

Ամմուն ձևը հավանաբար առաջացել է տրական հոլովածների համաբանությունյամբ—ըմմընուն— ըմմուն։ Հարկ է նշել, որ թուրքական փոխառությունն է՝ herkes—նույնիմաստ։

Ե. Անորոշ դերանուններն են՝ մէգ(է) (մեկը), ուրիշ, ֆրլան(է) (ինչ-որ մեկը, ոմն, այսինչը), քիսի (որը, ինչ-որ մեկը)։

Սրանցից ֆրլան-ը արաբական փոխառություն է՝ یرلان, یرم(ի) (kim)՝ թուրքական։

Զ. Փոխադարձ դերանունն է մէգմէգու||մէգըգմէգու||մէգմէգի, ավանդաված է միջին հայերենից։

Է. Ժխտական դերանուններն են՝ հէշ (ոչինչ), հէշմէգ(է) (ոչ մեկը), հիշ վիան. սրանք կազմաված են՝ քուրք. հիշ (ոչինչ) նույնիմաստ բառի հարադրմամբ՝ մէգ, վիան բառերի հետ։

Դերանունների կազմությունը որոշելիս վերանում ենք նրանց կազմության ու կազմավորման պատմական հարցերից և առաջնորդվում այն բանով, թե այս կամ այն դերանունը այժմ իբրև ի՞նչ է դիտակցվում (պարզ, բաղադրյալ)։ Բարբառի պարզ դերանուններն են՝ յէս, թուն, ինք, էս, էն, ըսի, ընի, հօս, հօն, սանց, նանց, վօվ, ինչ, յէփ, յուր, քանի, է՞ր, ըմմըն, մէգ (է), ուրիշ, ֆրլան, քիմ, հէշ, հարքաշ։

Ածանցավոր են ըսսիգի, ընիգի, բարդ-ածանցավոր՝ հօսըղիգ, հօնըղիգ դերանունները։

Բաղադրյալ դերանունները անիսկական բարդություններ են.

ա) կցական—էսթէն, էնթէն, էսդիդ, էնդիդ, հօսդիդ, հօնդիդ, մէդէլ, էսդժըրը, էնդժըրը, էսշէշիդ, էնշէշիդ, ինշգժըրը, ինշխըս։ Էս, էն և ինչ դերանուններով բարդացվածները կրում են երկու բառային շեշտ առաջին և վերջին ձայնավորների վրա, ըստ որում ավելի ուժգին է առաջին շեշտը։

բ) Հարադիր են վօր մի, վօր մէգ(է), հէշ մէգ(է), հէշ վիան դերանունները։

գ) Կրկնավոր-կցական է մէգմէգու||մէգըգմէգու փոխադարձ դերանունը։

Թվի կարգի արտահայտությունը բարբառում ունի ձևա-իմաստային և ձևաբանական դրսևորում։ Ըստ ձևա-իմաստային արտահայտության դերանունները բաժանվում են հետևյալ խմբերի.

1) Թվի կարգի լիակատար (ձևի և իմաստի առումով) դրսևորում ունեցող դերանուններ. դրանք են՝

անձնական—յէս, թուն, ինք.

ցուցական—ըսի, ընի, մէգէլ, սանց, նանց, էսթէն, էնթէն, էսշէշիդ, էնշէշիդ.

հարց-հարաբերական—վօվ, ինչ, քանի.

անորոշ—ուրիշ, ֆրլան։

2) Թվի կարգի միայն իմաստալիմ արտահայտություն ունեցող դերանուններ. սրանք երկու ենթախումբ են կազմում. ա) եզակի ձև և իմաստ ունեցող, անհոգնական դերանուններ՝ ըսսիգի, ընիգի, վօր մի, վօր մէգ (է), մէգ (է), քիմի, հէշ մէգ (է), հարքաշ (է). բ) եզակի ձև, հոգնակի իմաստ ունեցող դերանուններ՝ որոշյալ՝ ըմմըն, փոխադարձ՝ մէգմէգու։

3) Թվի կարգի արտահայտության նկատմամբ շեղոթություն ունեցող դերանուններ. ունենալով մակբայական և ածականական կիրառություն՝ սրանք թե՛ ձևով (եզակի), թե՛ իմաստով անտարբեր են թվի կարգի հանդեպ. էս, էն, հօս, հօն, էսդիդ, էնդիդ, էսդժըրը, էնդժըրը, հօսդիդ, հօնդիդ, հօսըղիդ, հօնըղիդ, յէփ, յուր, էր, ինշգժըրը, ինշխըս, հէշ, հէշ վիան։

Հոգնակիի ձևաբանական արտահայտությունը բարբառում կատարվում է ֆ, իր, նիր հոգնակակերտ թեքությունների միջոցով, ըստ որում ի-ով կաղմություններ ունեն միայն անձնական և ցուցական դերանունները (հինգ բառածեղ) — յէս, թուն, ինք, ըսի, ընի: Սրանց հիմքակաղմությունը շունի միօրինակություն: Եզակիի համեմատությամբ այս դերանունների հոգնակիում ունենում ենք.

ա) տարահիմքություն ուղիղ և թեք հոլովածներում.

յէս-մին-ֆ, իմ-միր, բնձի-մրգի, յէսի-մէգի.

բ) տարահիմքություն միայն թեք հոլովածներում.

թուն-բաւ-ֆ, ֆու-ցիր, ֆրգի-ցրգի, ֆէգի-ցէգի.

գ) հիմքակաղմություն եղակիի թեք հոլովածով կամ նրա հիմքով՝ իրան-իրան, բսուր-բսուն-ֆ, բնուր-բնուն-ֆ. վերջին երկուսը ունեն մասնիկավոր հիմքեր:

Մյուս դերանունների հոգնակիացումը կատարվում է անվանական սկզբունքներով: Հոգնակին կաղմվում է եզակի ուղղականի հնչյունափոխված կամ անհնչյունափոխ հիմքով և միավանկերի համար իր, բաղմավանկերի համար՝ նիր թեքությունով. վով-վովիր, ինչ-ինչիր, սանց-սանցիր, նանց-նանցիր, քանի-քանի(ը)նիր, էսթէն-էսթէնիր, էնթէն-էնթէնիր (սրանց վերջին բաղադրիչն է ստանում իր մասնիկը), ուրիշ-ուրիշ(ը)նիր, ֆրլան-ֆրլաննիր, մէգէլ-մէգէլնիր, էսչէշիդ-էսչէշրդնիր, էնչէշիդ-էնչէշրդնիր:

Այսպիսով, ք-ակաղմ հոգնակին շարունակում է պահպանել այդ նույն դերանունների հոգնակիացման հին հայերենի ավանդույթները՝ ընդհանուր առմամբ, և գործառում է բարբառում իբրև հիմնականում դերանվանական հոլովման սեփականություն: Սակայն դերանունների հոգնակիացման վրա անվանականը իր ուժեղ կնիքն է դրել:

Դերանունների մի մասը բարբառում չի թեքվում. դրանք են՝ էս, էն, էր, ինչխըս, վօր մի, հօսղըղիգ, հօնգըղիգ, քիմի, հէշ: Սրանց մի մասը ունենալով ածականական կամ մակբայական կիրառություն՝ փոխանվանաբար չի գործածվում: Մի երկուսն էլ փոխառյալ լինելով՝ թեք ձևեր չունեն, չնայած բացառված չէ փոխառյալ դերանունների հոլովումը:

Թեքվող դերանունները հոլովվում են կա՛մ անվանական հոլովման հիմունքներով, կա՛մ մասնակի դերանվանական հոլովմամբ: Ինչ խոսք, գերիշխող է անվանական հոլովումը:

Ա) Անվանական հոլովում. — Լրիվ հոլովվող դերանուններն են՝ ինֆ, բսի, բնի դերանունների հոգնակիները՝ իրանք, բսունք, բնունք, մէգէլ, ուրիշ, մէգ է), ֆրլան (է), ինչ, վօր մէդ (է), էսղ ըղըր, էնղ ըղըր, ինչղ ըղըր, էսչէշիդ, էնչէշիդ, քանի, ըմմըն, հարքաշ, սանց, նանց, հէշ փան:

Իրանֆ, բսունֆ, բնունֆ դերանունները ունեն առաջինը՝ հինգ, մյուսները չորսական հոլոված. տրական¹⁰ հոլովում սրանց հատուկ է ֆ/ց հերթադարձություն: Տրական, վերջինների նաև ուղղական, հոլովում այս դերանունները զուգորդվում են որոշիչ հոգի դեր կատարող ածականավորի հետ՝ իրանցա. բսունքս, բնունցա և այլն: Այս հոգի գործածվում է այն դեպքում, երբ խոսվում է խոսողին ու խոսակցին փոխադարձաբար ծանոթ առարկայի կամ անձի մասին: Ա հոգ կարող են ստանալ միայն նշված դերանունները և վերջին

¹⁰ Իմա՝ սեռական-տրական:

երկուսի եղակի տրականը՝ ըսուր(ւ), ընուր(ւ)։ Հարևան բարբառներից եղև-սիայում է ընդունված ա-ն իբրև ընդհանուր որոշիչ հոգ գործածելը։ Ուստի այս բարբառում ա-ի՝ իբրև հոգ դերանվանական եղակի օրինակներում գործա-ռելը պետք է համարել բարբառային խառնուրդի արգասիք։

Իրանք-ը իբրև անձնական դերանուն ունի նաև հայցական հոլոված, որը կազմվում է ուղղականից՝ ի վերջավորությամբ այս ի-ն բարբառի անձնական դերանունների հայցականի ընդհանուր հոլովանիչն է։ Բացառականը ունի մասնիկավոր հիմքակազմություն, ըստ որում զուգահեռաբար գործառում են երկու մասնիկ՝ և և մ։ Հիմք է հանդիսանում տրական հոլովածը։ Մ-ով կազմությունների համար բնորոշ է կրկնակի որոշիչ հոգի առկայությունը. այսպես. 1) տրական հոլ. + ն (մասնիկ) + էն (բաց-ի վերջ-յուն). 2) Տրական հոլ. + մ + էն + է (հոգ). օրինակ՝ իրանցնէ՛ն || իրանցմէ՛նէ։ Առաջին կազմության համար որոշիչ է հոգը բացառվում է այն պատճառով, որ բացառականի հոլովանիչի և վերջնահնչյունը՝ էն, գիտակցվում է (և է՛) իբրև որոշիչ հոգ, իսկ II կազմության մեջ՝ իրանցմէ՛նէ, հոլովանիչի և հոգը՝ էն, զաղարելի իբրև հոգ գիտակցվելուց, ուստի կտրիք է առաջացել նոր՝ է հոգի ավելացման՝ իրանցմէ՛ն + է։

Գործիական հոլովը նույնպես ունի մասնիկավոր հիմքակազմություն, սակայն սրանում գերիշխողը ա մասնիկն է։ Կազմությունն է՝ տրական հոլ. + մ(ն) + օվ + է (հոգ), հոգի կիրառությունը ազատ է։ Ամբողջականացնելով՝ կունենանք նշված դերանունների հոլովման հետևյալ հարացույցը։

Ուղղ.	իրանք	ըստունք(ւ)	ընունք (ւ)
Տր.	իրանց(ւ)	ըստունց(ւ)	ընունց (ւ)
Հայց.	իրանքի	—	—
Բաց.	իրանցնէ՛ն	ըսունցնէ՛ն	ընունցնէ՛ն
	իրանցմէ՛նէ	ըսունցմէ՛նէ	ընունցմէ՛նէ
Գործ.	իրանցնօ՛վ(է)	ըսունցմօ՛վ(է)	ընունցմօ՛վ(է)
	իրանցմօ՛վ(է)		

Տրական հոլովում ի հոլովանիչով թեքվում են (փոխանվանական կիրառության դեպքում) մէգէլ, ուրիշ, ֆըլան, էսղ ըղըր, էնղ ըղըր, ինչղ ըղըր, էսչէ-շիդ, էնչէշիդ, քանի, հարբաշ, սանց, նանց, հէչ փան դերանունները։

Սրանք բոլորն էլ ունեն շորսական հոլոված, որոնք կազմվում են անվանական հոլովման ընդհանուր հիմունքներով։ Սրանց հոլովման հարացույցը հետևյալն է.

Եղակի

Ուղղ. մէգէլ(է)	ուրիշ(է)	ֆըլան(է)
Տր. մէգէլի(ն)	ուրիշի ուրըշի(ն)	ֆըլանի(ն)
Բաց. մէգէլէն	ուրիշէն	ֆըլանէն
Գործ. մէգէլօվ(է)	ուրիշօվ(է)	ֆըլանօվ(է)
	էսղ ըղըր(է)	նույն կերպ և
	էսղ ըղըրի(ն)	էնղ ըղըր
	էսղ ըղըրէն	ինչղ ըղըր
	էսղ ըղըրօվ(է)	դերանունները

Ուղղ.	էսչէշիդ(է)	քանի	հարքաշ(է)
Տր.	էսչէշիդի(ն)	քանիի(ն)	հարքաշի(ն)
Բաց.	էսչէշիդէն	քանիէն	հարքաշէ(ն)
Գործ.	էսչէշիդով(է)	քանիով	հարքաշով
Ուղղ.	հէշ փան(է)	սանց, նանց(է)	
Տր.	հէշ փանի(ն)	սանցի, նանցի(ն)	
Բաց.	հէշ փանէն	սանցէն, նանցէն	
Գործ.	հէշ փանով(է)	սանցով, նանցով(է)	

Հոգնակի

Ուղղ.	մէդէլնիր(է)	ուրիշնիր(է)	ֆրլաննիր(է)
Տր.	մէդէլնիրու(ն)	ուրիշնիրու(ն)	ֆրլաննիրու(ն)
Բաց.	մէդէլնիրէն	ուրիշնիրէն	ֆրլաննիրէն
Գործ.	մէդէլնիրով(է)	ուրիշնիրով(է)	ֆրլաննիրով(է)

Ուղղ.	էսչէշիդնիր(է)	քանընիր(է)	սանցիր, նանցիր(է)
Տր.	էսչէշիդնիրու(ն)	քանինիրու(ն)	սանցիրու, նանցիրու(ն)
Բաց.	էսչէշիդնիրէն	քանինիրէն	սանցիրէն, նանցիրէն
Գործ.	էսչէշիդնիրով(է)	քանինիրով(է)	սանցիրով, նանցիրով(է)

Տրական հոլովում ու հոլովանիշ են ստանում ինչ, մէզ, վօր մէզ, ըմբըն դերանունները: Սրանցից մէզ և վօր մէզ դերանունների բացառականը ունի երեք կազմություն. եթե խոսքը իրի է վերաբերում, ապա բացառականը ուարդ կազմություն ունի՝ հիմք+վերջավորություն՝ մէզէն, վօր մէզէն: Իսկ եթե անձի մասին է, ապա ունի կամ վերլուծական՝ մէնէ մասնիկով և տրականով՝ մէզու մընէ՛ն, վօր մէզու մընէ՛ն. կամ մասնիկավոր հիմքով, համադրական կազմություն՝ մէզումէ՛նէ, վօր մէզումէ՛նէ:

Սրանց հոլովման հարացույցն է.

Եզակի

Ուղղ.	ինչ(է)	բամբն(է, իս, իթ)	մէդ(է) (նույն ձևով և վօր մէզ(է))
Տր.	ինչու(ն)	բամբնու(ն, սի, թի)	մէդու(ն)
Բաց.	ինչէն	բամբնէն(սի, թի)	մէդէն մէդու մընէ՛ն, մէդումէ՛նէ
Գործ.	ինչով	բամբնով(է, սի, թի)	մէդով (հազվադեպ կիրառություն)

Հոգնակի

Ուղղ.	ինչիր(է)	— մյուսները չունեն.
Տր.	ինչիրու(ն)	
Բաց.	ինչիրէն	
Գործ.	ինչիրով(է)	

Դերանունների մի մասի հոլովումը թերի է, պակասում է կամ գործածական չէ այս կամ այն հոլովաձևեր. Այսպես.

հօս, հօն, յուր գերանունները ունեն միայն ուղղական և բացառական հոլովածներ.

Ուղղ. հօս	հօն	յուր
Բաց. հօսցեն	հօնցեն	յուրցեն

Սրանց բացառականի հիմքը մասնիկավոր է: Այս ց մասնիկը կառուցվում է բարբառի անվանական հոլովմանը հատուկ տրական հոլովի սց, ց¹¹ վերջավորություններ (համտ.՝ դիղ-գէղաց, քօվ-քօվաց, վջրա-վջրացու, դազ-դրզացու): Ենթադրելի է, որ այս գերանունները երբեք ունեցել են տրական հոլովածն ց հոլովանիշով, որոնք գործածության փոքր հաճախականության պատճառով մոռացվել են: Տրականի հիմքով կազմվել է բացառականը՝ հօսցեն, հօնցեն, յուրցեն:

Հօսդիղ, հօնդիղ գերանունները ունեն միայն ուղղական և տրական հոլովածներ՝

Ուղղ. հօսդիղ	հօնդիղ
Տր. հօսդղաց	հօնդղաց

Բացառական չունեն, որովհետև նույն իմաստով կան հօսցեն, հօնցեն հոլովածները (այս գերանունները՝ հօս, հօսդիղ, իրենց թերի հոլովածներով լրացնում են միմյանց պակասը): Սրանցում հոլովվում է դիղ (տեղ) գոյականը՝ հնչյունափոխված հիմքով, իրեն հատուկ աց հոլովանիշով:

Էսթեն, էնթեն, էսդիղ, էնդիղ, յէփ գերանունները չունեն գործիական հոլովածն: Առաջին երկուսը տրականում ունենում են ու հոլովանիշ, որը ենթադրել է տալիս գործածությունից դուրս եկած էնթի, էսթի ձևերի երբեմնի գոյություն, որոնց հոլովումը յուրացվել է մյուսների կողմից: Բացառականը տրականածն է, սակայն տրականից տարբերվում է ն հոգի պարտադիր առկայությամբ, որը հոլովանիշի արժեք է ձևոք բերել: Բացառականում առկա է երկու հիմքակազմություն.

1) տրականի հիմք՝ էսթ, էնթ, 2) նախկին ուղղականի հիմք՝ էսթի, էնթի: Սրանց հոգնակին՝ էսթենիւ, էնթենիւ, քիչ է գործածական և չի հոլովվում:

Ուղղ. էսթեն, էնթեն
Տր. էսթու(ն), էնթու(ն)
Բաց. էսթուն էսթիուն, էնթուն էնթիուն

Էսդիղ, էնդիղ գերանունների տրականը ստանում է աց հոլովանիշը, բացառականի կազմությունն է՝ տրականն իբրև հիմք+էն հոլովանիշ.

Ուղղ. էսդիղ	էնդիղ
Տր. էսդէղաց	էնդէղաց
Բաց. էսդէղացեն	էնդէղացեն

Յէփ գերանունը հոլովվում է ժամանակ ցույց տվող գոյականների նման, տրականում ստանում է վա հոլովանիշ, բացառականը տրականածն¹² է:

¹¹ Գրաբարյան հոգնակի սեռական-տրականի հոլովիչն է, որ բարբառում սակավաթիվ բաների մեջ գործառում է իբրև եզակի տրականի հոլովանիշ:

¹² Տրականածն բացառականը հատուկ է անվանական հոլովմանը և բավական հնավանդ (արիստիկ) բնույթ ունի բարբառում. այն կառուցվում է գրաբարի անվանական հոլովման այն բա-

Ուղղ. յէփ

Տր. յէփվան(ն)

Բաց. յէփվան(է)

Փոխադարձ մէջմէջու դերանունը շունի ուղղական հոլով. տրականում ստանում է ու կամ ի հոլովանիշը, բացառականն ունի վերլուծական կաղմություն՝ տրականով և մէնէ՛ (մընէ՛ն)¹³ մասնիկով. հազվագեայ գործածությունն ունի գործիականը.

Տր. մէգմէգու||մէգմէգի

Բաց. մէգմէգու մէնէ՛ (մընէ՛ն)

Գործ. մէգմէգով

Բ) Տիրանականերտի բարբառում դերանվանական հոլովման կառուցվածքային առանձնահատկությունները ավանդական են, քանի որ առնչվում են զրաբարի (ընդհանուր հայերենի) դերանվանական հոլովման համակարգին: Ինչ խոսք, որ զուտ դերանվանական հոլովում բարբառը շունի: Այն հրեան է գալիս միայն ուղղական, սեռական և տրական հոլովներում: Բոլոր դեպքերում, սկսած հայցական հոլովից (մասնամբ նաև տրականից), մուտք են գործում անվանական հոլովման կառուցվածքային տարրերը:

Դերանվանական հոլովման են ենթարկվում հետևյալ դերանունները. անձնական՝ յէս, թուն, ինք, մինք, թուք, ցուցական՝ ըսի, ընի, հարց-հարաբերական՝ վօվ:

Անձնական դերանունների հոլովումը. նշված անձնական դերանունները ի տարբերություն անվանական հոլովման ունեն վեցական հոլովաձև՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական: Դերանվանական հոլովման առանձնահատկությունները հանդես են գալիս առաջին երեք հոլովներում: Յէս, թուն, թուք դերանունների սեռականը ամբողջովին տաբահիմք է՝ յէս-իմ, թուն-քու¹⁴, թուք-ցիր, իսկ մյուսներին՝ մասամբ՝ ինք-իր, մինք-միր:

Տրական հոլովը կաղմությամբ ներկայանում է իբրև դերանվանական և անվանական հոլովումների առանձնահատկությունների միաձուլում. ընձի. իրզի. իրան, մըզի. ցըզի¹⁵: Այս հոլովաձևերը տարրալուծելիս ստանում ենք ընձ. քըզ. իր. մըզ. ցըզ հիմքերը, որոնցից միայն իր-ն է համընկնում սեռական հոլովաձևին, մյուսները տարբեր հիմքեր են, և ի ու ան վերջավորությունները, որոնցից ի-ն գրեթե ընդհանուր է: Ան վերջավորությունը և իրան ձևը առնչվում են հին հայերենի իւրեան հոլովաձևին, իսկ ի հոլովանիշը, որ հատուկ է հիմնականում արևմտյան խմբի բարբառներին և զրական լեզվին, առնչվում է անվանական հոլովման տրականի ի վերջավորությունը¹⁶: Սա նորագոյացում է անձնական դերանունների հոլովման մեջ և ամենայն հավա-

ցառականի հետ, որը կաղմվում էր տրականից ի նախորդով. հմմտ. գր. տր. հոլ.— տիտանայրցո. ի տիտանաւ, տր.—ծառոյ—բցո. ի ծառոյ ժամանակի ընթացքում նախորի կորստյան պատճառով հարկ է զգացվել տարբերակման մի այլ միջոցի, որը այս բարբառում հանդիսացել է որոշիչ հոգի իբրև հոլովանիշ գիտակցվելու:

¹³ Անձի բացառական, որ հատուկ է անվանական հոլովմանը:

¹⁴ Փոխանվանական կիրառության համար Բու դերանունը ունի Բու՛մէ (բոնը) ձևը, որը կապվում է զրաբարի Բո ստացականի տրական Բում հոլովաձևի հետ:

¹⁵ Գործածական են նաև մասնիկավոր հոլովաձևեր՝ մըզիզի, բըզիզի, ցըզիզի և այլն:

¹⁶ Հո. Աճառյան, Լիակատար քերականություն, հատ. 2, էջ 73:

նականությունը կատարվել է հոլովական իմաստի առավել ընդգծման, ցայտուն արտահայտման պահանջով: Այսպիսով՝ տրական հոլովում հիմքակաղմությունը ավանդական է՝ դերանվանական, սակայն որոշակի և ընդհանուր վերջավորություն ի հայտ գալը պայմանավորված է անվանական հոլովման առանձնահատկությունների ներթափանցումով: Հայցական հոլովի կազմությունը բարբառում ինքնին մի հետաքրքիր, գրեթե եզակի երևույթ է հայերենի բարբառների պատմության մեջ:

Յէսի՛, քէզի՛, ինքի՛||ընքի՛, մէզի՛, ցէզի՛ (հիշենք նաև իրանքի)¹⁷: Տարալուծելիս ստանում ենք յէս, քէզ, ինք (ընք), մէզ, ցէզ հիմքերը և ի ընդհանուր վերջավորությունը: Հիմքակաղմությունը միօրինակ չէ: Իբրև հիմք երեւական են գալիս կամ ուղղական հոլովածները՝ յէս, ինք, կամ տրականի անհնչյունափոխ հիմքերը՝ քէզ (քզ), մէզ (մզ), ցէզ (ցզ): Թե ինչու են այս հիմքերը շնչյունափոխված, պետք է բացատրել այն երկրորդական շեշտով, որ կրում են հիմքի ձայնավորները. այդ շեշտը երբեմն այնքան ուժգին է, որ դժվար է լինում որոշել, թե ո՞ր ձայնավորն է առավել շեշտվածը՝ հիմքայինը, թե՞ հոլովանիշը: Հայցականի հիմքի ձայնավորների անհնչյունափոխությունը պայմանավորված է նաև այն միտումով, որ տարբերակում մտցվի միևնույն հիմքով ու վերջավորությամբ կազմված երկու հոլովածների միջև՝ տր. քէզի, հայց.՝ քէզի: Եզակի երրորդ դեմքի ինչի հայցականը ունի նաև րնֆի շնչյունափոխված հիմքով զուգահեռը, քանի որ այստեղ տրականի և հայցականի տարբեր հիմքերի հետևանքով շփոթության վտանգ չկա (իրան-ինքի):

Հայցականի համար (առավել կայուն և ընդհանուր ձևով, քան տրականի) բարբառը հաստատել է ի հոլովանիշ վերջավորությունը և սահմանել հիմքերի ու վերջավորության զուգորդումների իրեն հատուկ կարգ, որը բարբառի ինքնատիպ արտահայտություններից մեկն է: Կորցնելով հին հայերենի հայցականի զ տարբերակիչ նախդիրը¹⁸, բարբառը տարբերակման այլ միջոցներ է ընտրել՝ ձգտելով տրական և հայցական հոլովների ձևական տարբերակման պահպանմանը:

Բացառականի համար բարբառը ունի երկու հիմքակաղմություն. ա) տրականահիմք բացառական, որ նաև մասնիկավոր է. տրականի հիմք + ն + է + հոդ՝ րնձնէ՛||րնձնէ՛սի (զուգորդվում է կամ ն, կամ ս(սի) հոդի հետ), քզնէն, իրնէն, մրզնէն, ցրզնէն. բացառականի այս ձևերը առնչվում են միջին հայերենի ի քննէ, ի մննէ, ի ձննէ¹⁹ հոլովածներին, որոնք անցման օղակ են հանդիսացել բարբառի այս ձևերի առաջացման համար. իսկ ընդհանրապես տրականահիմք բացառականի ձևերը վկայված էին նաև հին հայերենում, շնայած գործառում էին ոչ բացառականի իմաստով՝ ինձէն, մննէն, քննէն, ձննէն. Երանք ինքնուրույնաբար կամ անձնական դերանունների ուղիղ ձևերի հարադրությամբ նշանակում էին ինքս, ինքներս, ինքդ, ինքներդ. օրինակ՝ «Ես ինձէն աշօք տեսի»: «Ըննէն իսկ ականատես եղաք»²⁰: Երանք միջին հայերեն-

¹⁷ Ինչպես տրականի, հայցականի համար էլ գործածական են մասնիկավոր հոլովածներ՝ քէզիդի, մէզիդի, ինքդդի և այլն:

¹⁸ Տիգրանակերտի շրջակայքի գյուղերում դեռևս գործածական են նախդրավոր հայցական հոլովածներ:

¹⁹ Հ. ր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. 2, էջ 246:

²⁰ Մ. Արեղյան, Դրաբարի քերականություն, Երևան, 1936, էջ 136:

նի և ժամանակակից բարբառների ձևերից տարբերվում են միայն հիմքի մասնիկավորման բացակայությամբ՝ մեղէն—ի մեղէն—մըղէն։ Այս և մասնիկը, որ առ այսօր հարատևում է բարբառների բացառականի զանազան ձևերում, կապվում է գրաբարի անձնական գերանունների բացառական հոլովաձևերին՝ յինէն, ի քէն, ի մէնջ, ի ձէնջ։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ միջին հայերենում եզակի 2-րդ դեմքի գերանունը ուներ ի ֆենէ (գրաբար ի ֆէն+նոր հոլովանիշ է) և ի ֆեգնէ զուգահեռ ձևերը. երկրորդ ձևում փոխված է միայն հիմքը, և մասնիկը առաջին ձևից համաբանությամբ անցել է նաև երկրորդին։ Նույն ուղին պետք է ենթադրել և մյուս դեմքերի համար՝ ի մեղնէ < ի մենէ < ի մենջ, ի ձեղնէ < ի ձենէ < ի ձենջ։

բ) Սեռականահիմք բացառական.— սրանում գործառում է մ մասնիկը. կաղմությունն է՝ սեռ. հոլովաձև+մ+էն+հոդ. իմմէ՛նսի, փոմէ՛նքի, միրմէ՛նէ, ցիրմէ՛նէ։

Առաջին երկու օրինակներում հանդես են գալիս համապատասխան ստացական հոգեր՝ ա. ք. իրենց մշտական ի հենարանով, վերջին երկուսում՝ է հոգը։ Սրանց նախորդող ն-ն (էն) կորցրել է հոգի արժեքը։

Եզակի 3-րդ դեմքի գերանվան բացառականը վերլուծական կաղմություն ունի՝ իւ մրնէ՛ն. սեռական հոլովաձևին հարադրվում է մէն մասնիկի բացառականը՝ մրնէ՛ն։ Այս մասնիկը և ընդհանրապես սեռականահիմք բացառականը կապվում է հին հայերենի ստացական գերանունների հոլովման համակարգին, համեմատել՝ Տիգ. բարբառ՝ իմմէ՛ն+սի- գրաբար՝ յիմմէ, միրմէ՛ն+է- ի մերմէ, փոմէ՛ն+թի- ի փոմէ, ցիրմէ՛ն+է- ի ձերմէ, իւ մրնէ՛ն- իւրմէ։ Միրմէ՛նէ, իմմէ՛նսի և այլ ձևերում հանդես եկող մէ՛ն հնչյունախումբը միջին օղակ է վերլուծական բացառականի մէնէ՛ (մրնէ՛ն) մասնիկի առաջացման համար. մէ՛ն(է) ձևում է-ն դեռևս չի կորցրել հոլովանիշի արժեքը, բայց նրան հաջորդող և հոգը այլևս չի գիտակցվում իբրև հոգ, ուստի կարիք է զգացվել երկրորդ՝ է հոգի գործառության։ Այս վիճակից մինչև մէնէ՛ (մրնէ՛ն) մասնիկի ձևավորումը մի քայլ է՝ է հոլովանիշի մթագնում և վերջին է հոգի ձևավորում իբրև հոլովանիշ, ուստի և նոր՝ և հոգի գործառության անհրաժեշտություն. այս բոլորը արտահայտվում է շեշտի տեղափոխությամբ նախորդ է-ից՝ վերջինի վրա՝ մէ՛նէ-մէնէ՛(ն) (մրնէ՛ն)։ Մէնէ՛ (մրնէ՛ն) մասնիկի գործառությունը համաբանությամբ գերանուններից տարածվել է նաև անձնանիշ (մասամբ կենդանանիշ) գոյականների բացառականի կաղմության վրա։

Սեռականահիմք բացառականի վերոբերյալ ձևերը բարբառում երբեք եստացականի իմաստ են ունեցել, ապա սկսել են գործառել նաև իբրև անձնական գերանուններ՝ ամբողջովին չկորցնելով ստացականի նշանակությունը, այնպես որ իմմէ՛նսի նշանակում է և՛ ինձնից, և՛ իմից, ինչպես նաև րնձնէն, փրզնէն կարող են գործածվել երկու իմաստով էլ։

Խորժիական հոլովը ունի միօրինակ, մասնիկավոր կաղմություն՝ տրականի հիմք+ն+օվ+հոդ, րնձնօ՛վ (սի), փրզնօ՛վ, իրնօ՛վ (է), մրզնօվ, ցրզնօվ (համտ. միջ. հայերեն՝ ֆեզնով, իրմով, մեզնով, ձեզնով)։

Անձնական գերանունների հոլովման ամբողջական հարացույցներն են.

Եզակի

Ուղղ. յէս	թուն	հինք
Սեռ. իմ(է)	քու (քումէ)	իր
Տր. րնծի րնծիդի	բրդի բրդիդի	իրան
Հայց. յէսի	բէզի բէզիդի	ինքի րնքի ինքբրդի
Բաց. րնծնէն իմմէ՛նսի	բրդնէն քումմէ՛նթի	իրնէն իր մրնէ՛ն
Գործ. րնծնօվ (սի)	բրդնօվ	իրնօվ (է)

Հոգնակի

Ուղղ. մինք	թուք
Սեռ. միր	ցիր
Տր. մրդի մրդբրդի	ցրդի ցրդբրդի
Հայց. մէզի մէզիդի	ցէզի ցէզիդի
Բաց. մրդնէն միրմէ՛նէ	ցրդնէն ցիրմէ՛նէ
Գործ. մրդնօվ	ցրդնօվ

Յուցական դերանուններից դերանվանական հոլովման հետքեր են կրում րսի, րնի դերանունները, որոնք ունեն չորսական հոլովաձև: Դերանվանական հոլովման յուրահատկությունները երևան են գալիս տրական հոլովում, որոշիչ հոդի դեր է կատարում ա ձայնավորը: Բացառականն ունի հետևյալ կազմությունը. տրական հոլովաձև+ն(մ)+էն+է (հոդ ունեն միայն մ մասնիկով ձևերը): Գործիականն ունի երկու հիմքակազմություն. ուղղականի հիմք+օվ+է (սլարտադիր չէ). տրական հոլովաձև (հնչյունափոխված)+օվ+է. ըսուվօ՛վ (է), րնուվօ՛վ(է). ըսուվ. ընուվ հիմքերը հանգում են ըսուր, րնուր հոլովաձևերին, որոնց ր-ն գործիականի վ վերջավորության կողմից ենթարկված է լիակատար աոնմանման: Հոլովման հարացույցն է՝

Ուղղ. ըսի	րնի
Տր. ըսուր(ան)	րնուր(ան)
Բաց. ըսուրնէ՛ն ըսուրմէ՛նէ	րնուրնէն ընուրմէ՛նէ
Գործ. ըսօվ ըսուվօ՛վ (է)	ընօվ ընուվօ՛վ (է)

Դերանվանական հոլովման տարրեր է սլարտականում նաև հարց-հարաբերական վօվ դերանունը, որի հոլովման հարացույցն է՝

Ուղղ. վօվ	վօվիր
Տր. վօր	վօվէրու
Հայց. վօվի	—
Բաց. վօր մրնէ՛ն վօրմէ՛ն	վօվէրէն և չիչ գործածական ձևեր
Գործ. վօվօվ վօրմօվ	վօվէրօվ էն:

Եզակի տրականում առկա է վ/ր հերթագայություն, հիմքերը միևնույնն են: Հայցականի համար հիմք է ծառայում ուղղականը՝ վօվ, իսկ իբրև վերջավորություն՝ նույն ի-ն, ինչ անձնական դերանունների հայցական հոլովում. փաստորեն այս ի-ն անձնանիչ դերանունների հայցականի վերջավորությունն է բարբառում: Բացառականն ունի երկու կազմություն միևնույն

հիմքով. առաջինը՝ վերլուծական, երկրորդը՝ համադրական: Գործիականը երկու հիմնային կազմութիւն ունի. ուղղական + օվ, տրական + մ + օվ:

Վօվ դերանվան հոլովման հարացույցը թեք հոլովաձևերում վոխարինված է որ դերանվան հոլովաձևերով (վօր դերանունը բարբառում երևան է գալիս միայն հարադրութիւնների մեջ՝ վօր մի, վօր մէգ, և չի հոլովվում): Տրական հոլովի վօր (ում) ձևը համապատասխանում է հին հայերենի ուոյ, ժամանակակից արևմտյան դրականի որո հոլովաձևին՝ ու ($< n$) հոլովանիշի անկումով: Այսպիսով՝ այս դերանվան հոլովման հարացույցում հանդես եկած դերանվանականի փոքրիկ տարրը հետևանքն է երկու դերանունների՝ ուվ և ու, հոլովման հարացույցների համադրման:

МЕСТОИМЕНІЯ ТИГРАНАКЕРТСКАГО ДИАЛЕКТА

А. Н. АНЕЯН

(Р е з ю м е)

В статье рассматриваются вопросы образования местоимений тигранакертского диалекта армянского языка, их соотношение с местоимениями в древнем, среднем и новом армянском языках и диалектах последнего. Исследованы также структура местоимений, независимо от исторических вопросов их формирования, выражение категории числа местоимений и формально-семантическая классификация типов образования множественного числа, выражение категории склонения, структурные особенности именного и местоименного склонений и степень проникновения элементов именного склонения в местоименное. Проведены парадигмы склонения местоимений.